




ԱՆՑՅԱԼԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ

Ստորև տպագրում ենք անցյալ դարի 90-ական թվականների երկու հետաքրքիր փաստաթղթեր, որոնք վերցված են Կովկասյան Փոխարքայի Գլխավոր գրաքննչական կոմիտեի արխիվներից: Երկուսն էլ վերաբերում են «Արարատ» ամսագրի գրաքննության հարցերին:

Ցարական Ռուսաստանի սատրապների և նրանց գրաքննիչների համար անհանդուրժելի էր հասարակական մտքի զարգացման, հառաջդիմության և ազգային զարթոնքի որևէ արտահայտություն, ինչպիսի ձևով էլ որ այն արտահայտվելիս լիներ, անգամ, թեկուզ շատ աղոտ կերպով, կրոնական մամուլում:

Հարկավ «Արարատը» չափազանց հեռու է եղել իր ժամանակի բոլոր հասարակական շարժումների արձագանք լինելուց, շարժումների, որոնք ընդգրկում էին համայն

Ռուսաստանը: Նրա շոշափած խնդիրները սահմանափակվում էին ազգային-եկեղեցական շրջանակներով, ուր Մայր Աթոռի ամսագիրը համարձակորեն հանդես էր գալիս ի պաշտպանություն հայ եկեղեցու ինքնուրույնության, անկախության, հանրային շահերի, առաջադեմ ու լուսամիտ գաղափարների և ազգային միասնության: Սակայն հրապարակախոսական այս նվազագույնն անգամ հաճելի չէր ցարական իշխանավորներին, որոնք պատրաստ էին ավելի սեղմելու գրաքննության խեղդիչ օղակը ամսագրի շուրջը:

Եվ այնուամենայնիվ, չնայած ցարական գրաքննիչների բոլոր ջանքերին, «Արարատը» մինչև վերջ հավատարիմ մնաց հայ եկեղեցու, հայ ժողովրդի զարթոնքի և ազգային հառաջդիմության շահերին:

ԿՈՎԿԱՍԻ ԲԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԵՏԻ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԳԱՂՏՆԻ

ԳԻՄՈՒՄԱԳԻՐԸ ՈՒՂՎԱՅՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՊԱՐՈՆ ՄԻՆԻՍՏՐԻՆ,

ԱՌ 24 ՄԱՅԻՍԻ 1897 ԹՎԱԿԱՆԻ, № 542

Ամենայն Հայոց Պատրիարք-Կաթողիկոս Գևորգ 1868 թվականին, մեր կառավարության կողմից իր պատրիարքական ընտրության հաստատումից անմիջապես հետո, այդ առիթով Թիֆլիզ Մեծ Իշխան Փոխարքային ներկայանալիս, Նորին Բարձրությանը հայտնեց իր մտադրությունը՝ Էջմիածնում հրատարակելու ամենամյա կրօնա-քարոչական հանդես: Հետագային, երբ նրա այս մտադրությունը իրականացավ, նա այս մասին տեղեկացրեց Կովկասյան Գլխավոր Կառավարչությանը, ընդ որում հույս հայտնեց, որ իր հիմնած ամսագիրը իր ուղղությամբ կարող է քարեկապատ ազդեցություն ունենալ Ռուսաստանի և հատկապես Կոստանդնուպոլսի հայ ազգաբնակչության վրա:

Այս առթիվ Փոխարքայի Գլխավոր Կառավարչության պետը, Նորին Բարձրության հանձնարարությամբ, իր հույն թվականի հունիս 21-ի գրավոր կար-

ծիքի մեջ մանրամասն բացատրելով, թե ինչ պայմաններում և ինչ ուղղության դեպքում, համաձայն մատնանշված նպատակի, այդ ամսագիրը կարող է արժանանալ Կովկասյան Գլխավոր Կառավարչության համակրանքին, հայտնեց Պատրիարքին, որ թույլատրվում է հրատարակել «Արարատը» առանց նախնական քննության Կովկասյան Գրաքննչական Կոմիտեում, եթե Պատրիարքը իր վրա վերցնի ամսագրի գրաքննությունը և հրատարակի այն իր պատասխանատվությամբ, ընդ որում Էջմիածնի տպարանը պարտավորվում է Գրաքննչական Կոմիտեին ներկայացնել ամսագրի յուրաքանչյուր համարից օրենքով սահմանված օրինակները: Պատրիարքը սրա դեմ չառարկեց:

Վերոհիշյալ ամսագրի գրաքննության իրավունքը այնուհետև ժառանգաբար անցնում էր Էջմիածնի մյուս պատրիարքներին, ինչպես նաև ամեն անգամ,

Կովկասյան Գլխավոր վարչության հաստիք թույլ տրվելուց, անցնում էր Էջմիածնի Սինոդի նախագահին, երբ պատրիարքական Աթոռը թափուր էր մնում:

Իր հրատարակության սկզբից «Արարատ» ամսագիրը խիստ անհամապատասխան գտնվեց նախապես նշված ուղղությամբ: Դեռևս առաջին համարում զետեղված ծրագրից կարելի էր նկատել, որ առանձին ուշադրություն է դարձվելու ամսագրի պատմա-աշխարհագրական բաժնին, որի միջոցով նախատեսվում էր հայերի մեջ արթնացնել հայրենասիրական զգացմունքներ, նկարագրելով «ազգի և հայրենիքի պաշտպան նախնիների մեծ գործոց հիշատակարանները» և տպագրելով «պատմական ակնարկներ, ինչպես Արարատյան մարզի վերաբերյալ, որ իրենց գահերն են հաստատել հայոց թագավորները, այնպես էլ Հայաստանի այլ վայրերի մասին»: Ի հակադրություն Հայաստանի քաղաքական անցյալի, նկատի էր առնվում «խորտակված սրտով» ներկայացնել երկրի ներկա տխուր վիճակը: Ըստ ծրագրի, ամսագրի վերոհիշյալ բաժնի նշանաբանն էր հանդիսանում «Հայը ձգտում է դեպի հայության հին կենտրոնը և անպայման պետք է որ ձգտի»:

Այնհայտ է, որ հետևելով միայն այդ ծրագրին «Արարատը» չկարողացավ օժանդակել հասնելու համար այն նպատակին, որը դրվել էր 1888 թվականին Կովկասյան Գլխավոր վարչության կողմից, այն է—հայերի մերձեցումը ռուս ժողովրդի հետ: Սակայն եղել են դեպքեր (ինչպես օրինակ, կառավարական կարգադրությունները հայկական ծխական-եկեղեցական դպրոցների մասին), երբ ամսագիրը միանգամայն ընդդիմադիր դիրք ընդունելով մեր կառավարության դեմ, միացել է հայկական մյուս հրատարակությունների բանավեճին, որը և բորբոքել է մեզ թեմանի ազգային կրքեր:

«Արարատ» ամսագրի նմանօրինակ ուղղությունը արտահայտվեց նաև ներկա Պատրիարքի* օրոք այն բանից հետո, երբ Ջերդ Գերագանցության կողմից, 1895 թվականի հոկտեմբերի 31-ի № 17 գրությամբ առաջարկեց Նրան իր ազդեցությունը գործադրել ռուսաբայերի և արտասահմանյան հայերի նկատմամբ՝ նպատակ ունենալով վերջ տալու քաղաքական խռովություններին Փոքր Ասիայում: Կարծես կանխամտածված ձևով, ի հակասություն այդ առաջարկության, «Արարատի» մի ամբողջ շարք համարներում երևացին ծայրահեղորեն գրգռիչ բնույթի հոդվածներ, ուղղված բոլոր մեծ պետությունների դեմ, որոնք իրենց մասնակցությունն են բերում խռովությունների խաղաղեցման գործին (Ինֆանտերիայի գեներալ կոմս Տատիշչևի անցյալ տարվա մայիս 17-ի նամակի հավելվածը):

Նկատի ունենալով վերոհիշյալը, հազիվ թե նպատակահարմար համարվի այն բացատիկ դրությունը, որով օժտված է «Արարատ» ամսագիրը գրաքննության տեսակետից: Դա, թերևս, որոշ նշանակություն

ունի անցյալում (ինչպես օրինակ, 1860-ական թվականներին), երբ արտասահմանի և հատկապես Կոստանդնուպոլսի հայերը, պաշտպանություն գտնելով Արևմտյան տերությունների կողմից, մեզ համար թշնամական իրենց քաղաքական ձգտումներով աշխատում էին նույն ոգով ազդեցություն գործ դնել իրենց ազգակիցների վրա Ռուսաստանում, որ հայ ստավորականությունը այն ժամանակ դեռևս ասկավաթով էր և չունի քավարա չափով ուժ և համախմբվածություն որպեսզի կարողանար ակնառու դիրք գրավել:

Ներկայումս մեր հայերը իրենց անջատական ձգտումներով չեն զիջում իրենց արտասահմանյան եղբայրներին, որով աննպատակ է պաշտպանել նրանց վերջիններիս վնասակար ազդեցությունից: Ընդ որում այս հարցում որևէ ներգործություն երբեք չի կարելի պատել Էջմիածնից, որը, Պատրիարքի գլխավորությամբ, սովորաբար հայերի համար հանդիսանում է ոչ այնքան կրոնական, որքան քաղաքական միասնության կենտրոն և հյու զենք նրանց անջատողական ձգտումների համար:

Ելնելով վերոհիշյալ մտածումներից, այլ և նկատի ունենալով, որ պրավոսլավ եկեղեցու բոլոր հոգևոր պարբերական հրատարակությունները և նույնիսկ թեմական տեղեկագրերը ենթակա են պատասխանատու գրաքննության, ես ոչ մի հիմք չեմ գտնում այդ ուղղությամբ բացառություն թույլ տալու օտար դավանության պատկանող հոգևոր ամսագրի նկատմամբ և գտնում եմ, որ նույնպիսի գրաքննության պետք է ենթարկել «Արարատ» ամսագիրը: Ըստ որում զուտ հոգևոր բնույթ կրող հոդվածների գրաքննության համար պետք է Պատրիարքի կողմից նշանակվի առանձին պատասխանատու գրաքննիչ ի դեմս հոգևորականների և Կովկասյան Գլխավոր Կառավարչության համաձայնությամբ, իսկ մյուս հոդվածները պետք է ուղարկվեն Կովկասյան Գլխավոր գրաքննչական կոմիտե նախնական քննության, որը «Արարատ»-ի համար, իբրև ամսագրի, դժվարություն չի կարող ներկայացնել:

Չկամենալով, սակայն, դիմելու կտրուկ միջոցների, առանց դրա համար մոտավոր առիթն ունենալու, ես, հայտնելով վերոհիշյալի մասին Ջերդ Գերագանցության, պատիվն ունեմ խնդրելու որպեսզի բարձրագույն նկատառման հանձնվի իմ կարծիքները և հայցելու Նորին կայսերական մեծության հաճությունը՝ իրավունք տալու ինձ առաջին իսկ հարմար առիթով նախնական գրաքննության ենթարկելու «Արարատ» ամսագիրը վերև մատնանշված հիմունքների համաձայն:

Հետևանքների մասին հանցեք հարգել ծանուցմամբ:

Գեներալ-ադյուտանտ իշխան՝ Գ.Ու.Ի.Ց.Ի.Ն,
ՍԵՆԱՍՏՈՐ

Վավերացրել՝

Առաջին գրասենյակի դիրեկտոր՝

Մ.Ա.Ց.Կ.Ե.Վ.Ի.Զ.

* Խոսքը Խրիմյան Հայրիկի մասին է:

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ, ԿՈՎԱՍՍԻ ԳՐԱՔՆԱԶԱԿԱՆ,

ԿՈՄԻՏԵԻ ՊԱՐՈՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ,

Կովկասի գրաքննչական Կոմիտեի տեղական և արևելյան լեզուների ավագ գրաքննիչ՝

Կոլեժսկի խորհրդական Բիշմիշևի զեկուցագիրը

Հմր. 2. Մարտ 3, 1892 թ.

«Արարատ» ամսագրում Պետրոս Սիմոնյանցի— որպես նույն ամսագրի խմբագրության նախկին անդամի— գործունեության վերաբերյալ տպագրված հոդվածի հավելումի մասին, հավելում, որը կրում է «Միաբանության անդամ» ստորագրությունը, ես պատիվն ունեցա զեկուցելու Ձեր Գերազանցության, որ վերջին ժամանակներս «Արարատ» ամսագիրը տպագրում է քաղաքական բնույթի հոդվածներ, որոնք սուվեր են գցում հանգուցյալ Պատրիարք և Կաթողիկոս Մակարի հիշատակին և շոշափում պատիվն ու բարի անունը ազնիվ անձնավորությունների:

«Միաբանության անդամ»-ի վերոհիշյալ հավելումի մեջ, որի թարգմանությունը ներկայացված է իմ կողմից, ի միջի այլոց կա հետևյալ արտահայտությունները, որոնք վերաբերվում են Մակար Կաթողիկոսի գործունեությանը.— «Նրա (Պետրոս Սիմոնյանցի) ձայնը վճռական նշանակություն ուներ գրեթե բոլոր գործերում՝ ինչպես վարչական, ուսումնական, այնպես էլ տնտեսական»: Այնուհետև— «Հանգուցյալ Կաթողիկոսը սովորություն ուներ զանձարկից դրամ վերցնելու, մասնավորապես հատուկ պարգևատրումների համար»:

«Արարատ» ամսագրի սույն թվականի հունվարի համարում խմբագրությունը շարունակում է հարազատ մնալ իր կողմից որդեգրած բանասիրական բնույթ կրող տոնին և շոշափում է ոչ միայն մասնավոր անձանց, ինչպիսիք են Ներսիսյան Հոգևոր դպրանոցի հոգաբարձուներ՝ երդվյալ հավատարմատար Եվանգույովը և իշխան Կոստանդին Բերյովովը, այլ և շոշափում է հոգաբարձության նախագահ՝ Վրաստանի և Իմերեթիայի թեմի առաջնորդ Մամբրե Եպիսկոպոսի և նույնիսկ Կոստանդնուպոլսի ներկա Պատրիարք՝ Խորեն Արքեպիսկոպոս Աջըզյանի պատիվը:

Խոսելով տեղակալության հարցի վերաբերյալ տեղական հաշկական և արտասահմանյան թերթերում ընդունված ուղղության մասին, «Արարատ» ամսագրի խմբագրությունը ավելացնում է— «Արևելք» թերթը մեկ Volt Face-ով դավաճանելով իր անցյալին ու իր դավաճած գաղափարներին և գտնվելով մեծ ձեռքումներ (դեպի իշխանություն, տվյալ դեպքում դեպի ծայրագույն Պատրիարքի իշխանությունը) ունեցող մի բարձրաստիճան պաշտոնյայի (Վ. Պոլսո Պատրիարքի) հովանավորության ներքո, դարձել է մի օրգան, որը ծայրքում է ամեն տեսակի ստեր: Մենք չենք կարող արտատպել «Արարատ»-ում այդ բոլոր ստերը և հերքել դրանք, քանի որ դա կնշանակեր վերածել «Արարատ»-ը աղտոտությունների պահեստարանի»:

Այնուհետև վերլուծելով Ներսիսյան Հոգևոր դպրանոցի հոգաբարձության շրջանակում տեղի ունեցած միջադեպը, որն առաջացել էր տեղակալի կարգադրությանը չենթարկվելու և դպրանոցի երկու ուսուցիչներին արձակելու կապակցությամբ, «Արարատ» ամսագրի խմբագրությունը բացականչում է— «Ահա ձեզ բարձրաստիճան հոգևորական, թեմակալ առաջնորդ, եպիսկոպոս, որին ներելի չէ ոտնահարել այն օրենքներն ու կանոնները, որոնցով պաշտոնապես ղեկավարվում է եկեղեցին և որը թույլ է տալիս իրեն ընդդիմանալ իր պետին ու ընթանալ նեղ կուսակցական ոգով համակված երկու աշխարհական անձանց (Եվանգույով և իշխան Բերյովով) հետքերով...»:

Այդ ընդարձակ հոդվածում թեմակալ առաջնորդի և դպրանոցի երկու հոգաբարձուների հասցեին նշած վերոհիշյալ արտահայտություններից բացի, կան նաև շատ այլ արտահայտություններ, որոնք վարկաբեկում են այդ անձանց բարի անունը: Այսպես, օրինակ, հանդիպում ենք հետևյալ արտահայտությունների— «Դպրանոցի հոգաբարձության նախագահի և մի քանի անդամների հակաօրինական և շահագիտական վարմունքը», «Կանոններից շեղվող հոգաբարձուները և նրանց նախագահը», «Կատարելով աղյալիսի ծանր հանցանք և վրդովմունք հարուցելով ընդդեմ Գերագույն Հոգևոր իշխանության...» և այլն:

Բացի այդ, «Արարատ» ամսագրի նույն համարում կարելի է հանդիպել այլ կարգի ակնարկություններին— «Դա բախտավորություն է, որ Հայ պարբերական մամուլի լավագույն հատվածը նյութական շահերով կապված չէ Էշմիածնի հետ և կամ այս ու այն եպիսկոպոսի հետ...», «Պաշտոնական «Արարատ»-ը լուրն էր, քանի որ հայտնի էր, թե ինչ ճանկերումն էր այն գտնվում...», «Պարզ էր, որ 1884—1885 թթ. ընտրությունների ժամանակ տեղի ունեցած փաստերը իզուր և անհետևանք չանցան, այլ ծառայեցին ուշադրություն և նախազգուշացնող դասեր: Վերոհիշյալ տարիներից հետո չեն փախվել ոչ մարդիկ, ոչ ձգտումները և ոչ էլ նպատակին հասնելու միջոցները»: Ծառի վերջի պարբերությունը շարված է ընդգծված տառերով և ակնարկում է Մակար Կաթողիկոսի ընտրությանը:

Վերոհիշյալից Ձեր Գերազանցությունը կհանի տեսնել, որ ոչ հոդվածի տեղը, ոչ էլ նախադասությունների ու արտահայտությունների ընտրությունը և ոչ նույնիսկ վերոհիշյալ ակնարկությունները պետք չէ որ տեղ գտնեին այնպիսի պաշտոնական ամսագրում, ինչպիսին է «Արարատ»-ը, որը համարվում է Հոգևոր հաստատության օրգան:

Ինչպես հայտնի է Ձեր Գերազանցության, Տեղա-

կալի իրավունքների հարցը անցյալում բավական արվեց, մամուլում տեղի ունեցած բանավեճի պատճառով և գրգռեց թե տեղի և թե թրքահայերի մտքերը, առաջ բերելով անցանկալի հուզումներ նրանց մեջ, որով գրաքննությունը ծամանակին արգելեց բանավեճը մամուլում, գտնելով անհարմար և անցանկալի այդ հարցի հետագա քննարկումը: Այդ հարցի նոր քննարկումը «Արարատ»-ի էջերում, բանավեճի բնույթ կրող և կրքոտ հարձակումներով լի հոդվածների ձևով, առնվազն անհարմար է:

Նույնը կարելի է ասել նաև Ներսիսյան Հոգևոր դպրանոցում տեղի ունեցած միջադեպի մասին, որի շուրջը եղած լրատվություններն ու հոդվածները անառարկելի կերպով արգելվեցին մամուլում, ինչպես առանձին գրաքննիչների, այնպես էլ Կոմիտեի որոշմամբ, որպես երիտասարդ սերնդի մտքերը գլորող և դպրոցական կարգապահությունը խախտող նյութեր:

Տեղին չեն նաև անձնական վիրավորական հարձակումները ընդդեմ հովվապետների, մանավանդ ներկայիս, երբ հերթի է դրված Հայ Եկեղեցու պետի ընտրության հարցը և մամուլի մեջ սպրդում են անույնները այն հոգևոր անձանց, որոնք նախատեսվում են Հայրապետական Աթոռի թեկնածուներ:

Մինչև հիմա գրաքննությունը ղեկավարվել է վերոհիշյալ նկատառումներով և արգելել է տպագրել նման անձանց համար վիրավորական հոդվածներ և դիտողություններ:

Այս ամենը, ինչպես նաև բազմաթիվ այլ փաստեր վկայում են, որ «Արարատ» ամսագրի խմբագրության ղեկավարման գլուխն անցած ավագ Սարկավագ Գալուստ Տեր-Մկրտչյանը բոլորովին անպատրաստ է հարկ եղած արժանապատվությամբ վարելու Էջմիածնի վանքի պաշտոնական օրգանը:

Այս ամենի հետևանքով, այլև նպատակ ունենալով վերացնելու, ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի հայերի միջև եղած դժգոհությունները, որոնք առաջանում են «Արարատ» ամսագրում տպագրվող և հետագային տպագրվելիք բանավեճի բնույթի և մասնավոր ու հոգևոր անձանց դեմ կրքոտ հարձակումներ պարունակող հոդվածներից, չափազանց ցանկալի է, որպեսզի հետ այսու արգելվեն նման հոդվածների տպագրումը Էջմիածնի վանքի պաշտոնական օրգանում:

Կոլեժսկի խորհրդական՝

Ա. Զ Ի Ծ Մ Ի Ծ Ե Վ

